## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏԱ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.02.2018թ. ժամը ***10⁰⁰***-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**<u>Օրակարգ</u>**

***<u>Հայտերի բացման և գնահատման մասին</u>***

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏԱ-18/2» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110)**
2. **<<ՌԵԱՔԻՄ>> ՍՊԸ (ՀՀ, ք.Գորիս, Արզումանյան 19/67)**
3. **<<Մեծ Ծիածան>> ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Ա. Ավետիսյան 78, բն.3)**
4. **<<ՄԱԿՐՈ ՖՈՒԴ>> ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Հ.Հովհաննիսյան 27/6)**
5. **<<Էկոմիքս>> ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 31/1 բն. 28)**
6. **<<Էքսպրես Շին>> ՍՊԸ(ՀՀ, Արմավիր, գ. Բամբակաշատ, 14 փ. 3)**
7. **<Տիգման Գրուպ >> ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 20/40)**
8. **<<ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Ջրաշեն, 1փ., 2-րդ նրբ., տուն 1)**
9. **<<Նարիմ>> ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/54)**
10. **ԱՁ Գրիգոր Բաբայան(ՀՀ, ք. Բյուրեղավան, Զ.Անդրանիկի փ 32/48)**

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ ներքոնշյալ կազմակերպությունների հայտերի.

1. **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում 16-րդ չափաբաժնի հաշվարկում տեղի է ունեցել սխալմունք՝ 3-րդ և 4-րդ սյունակներում գրված թվերի հանրագումարը հավասար չէ 5-րդ սյունյակի թվին: Հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագրում արժույթի կոդը լրացված չէ:

2. **<<Նարիմ>> ՍՊԸ** կողմից ներկայացված հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագրում արժույթի կոդը լրացված չէ:

3. **<<Էքսպրես Շին>> ՍՊԸ** կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում Պատվիրատուի անվանումը սխալ է լրացված:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Մերժել **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի** և **<<Նարիմ>> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
2. Կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը: Հաջորդ նիստը հրավիրել **2018թ. փետրվարի 15-ին, ժամը 16:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում,:

**Քարտուղարին՝**

Էլեկտրոնային եղանակով տեղեկացնել **<<Էքսպրես Շին>> ՍՊԸ-ին**, որ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկի անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ______________ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______________ Վ. Պետրոսյան

______________ Վ.Մկրտչյան

______________ Մ.Անտոնյան

______________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ______________ Մ.Մուրադյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով ձևավորված « ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏԱ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.02.2018թ. ժամը ***16$^{00}$***-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**1. Անհամապատասխանությունները վերացնելու վերաբերյալ**

<<Էքսպրես Շին>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը**

| Հ/Հ | Անվանում | Քանակ | Նախահաշվային գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | <<Էկոմիքս>> ՍՊԸ | <<ՌԵԱՔԻՄ>> ՍՊԸ* | <<Մեծ Ծիածան>> ՍՊԸ | <<ՄԱԿՐՈ ՖՈՒԴ>> ՍՊԸ | <<Էքսպրես Շին>> ՍՊԸ | <<Հի ԴՐՈ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ | ԱՁ Գրիգոր Բաբայան* | Տիգման Գրուպ >> ՍՊԸ | «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ | <<Նարիմ>> ՍՊԸ |
| 1 | մաքրող նյութեր | 100 | 125000 | 108000 | 42300 | 102083 | 82000 | 102500 | 34167 | | | 96083.3 | |
| 2 | մաքրող նյութեր | 100 | 80000 | 140500 | 59300 | 115167 | 79500 | 112500 | 120833 | 143750 | | 114417 | |
| 3 | մաքրող նյութեր | 100 | 90000 | 140500 | 90000 | 35416.7 | 50750 | 149000 | 150000 | | | 131917 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | մաքրող նյութեր | 100 | 70000 | 53833 | 55000 | 82416.7 | 78750 | 92500 | 29167 | | | | |
| 5 | մաքրող նյութեր | 100 | 40000 | 26333 | 29000 | 17416.7 | 24000 | 23000 | 15000 | 26450 | | 23916.7 | |
| 6 | մաքրող նյութեր | 100 | 60000 | 53833 | 35000 | 43833.3 | 47000 | 49500 | 49000 | | | 41833.3 | |
| 7 | մաքրող նյութեր | 10 | 25000 | 24133 | 24000 | 6883.33 | 21025 | 23750 | 11458 | | | 19608.3 | 17917 |
| 8 | մաքրող նյութեր | 100 | 100000 | | 150000 | 1250000 | | 288000 | 135417 | | | | |
| 9 | լվացող նյութեր | 85 | 42500 | | | 95625 | 36338 | 27838 | | | | | |
| 10 | լվացքի փոշի ձեռքով լվանալու համար | 100 | 50000 | 37167 | 35000 | 50000 | 34500 | 32750 | | | | 29250 | |
| 11 | ապակի մաքրելու միջոց | 200 | 70000 | 54000 | 43600 | 36333.3 | 47500 | 45000 | 37500 | 56300 | | 51166.7 | 183333 |
| 12 | կահույքի փայլեցման միջոց | 100 | 48000 | 53833 | 49000 | 33250 | 36500 | 41250 | 41667 | | | 49333.3 | |
| 13 | օճառ, հեղուկ | 100 | 30000 | 34667 | 27500 | 30416.7 | 32250 | 35750 | 21667 | | | 29500 | |
| 14 | հատակի լվացման լաթ | 300 | 165000 | 224000 | 105000 | 103750 | 166250 | | | | 85500 | | |
| 15 | հատակի լվացման լաթ | 300 | 135000 | 149000 | 105000 | 99500 | 109500 | | 100000 | | 85500 | 136750 | 167500 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | հոտազերծիչ, օդի | 100 | 50000 | 58000 | 41000 | 31833.3 | 32750 | 53750 | 55000 | 73600 | | 8715 | |
| 17 | հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտյա | 20 | 60000 | | 34000 | 33166.7 | 16400 | | 37500 | | | | |
| 18 | ավել գոգաթիակի հետ, պլաստմասե | 20 | 40000 | 76600 | 30000 | 24833.3 | 18750 | | 22917 | | | | |
| 19 | գոգաթիակ, աղբը հավաքելու համար, հասարակ | 50 | 10000 | 10250 | 7500 | 6625 | 7250 | | 5208 | | | | |

*** կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ չվճարող**

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը արձանագրեց, որ**

Կազմակերպությունների առաջարկած գինը ընթացակարգի 8-րդ չափաբաժնի համար գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2018թ. փետրվարի 20-ին, ժամը 10:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

**Քարտուղարին՝**

Մեկ աշխատանքային օրում կազմակերպություններին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ______ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______ Վ. Պետրոսյան

______ Վ.Մկրտչյան

______ Մ.Անտոնյան

______ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ______ Մ.Մուրադյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով ձևավորված « ՀՀՔԿԳ-ԳՀԱՊՁԲ-ՏԱ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.02.2018թ. ժամը 10[00]-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Պետրոսյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

## 1. Միաժամանակյա բանակցությունների մասին

Բանակցություններին ոչ մի մասնակից չի ներկայացել:

**Հանձնաժողովը որոշեց.**

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1, 4, 5, 13, 19 չափաբաժինների համար <<**ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ**>> **ՍՊԸ** –ին,
2, 6 չափաբաժինների համար <<**ՌԵԱՔԻՄ**>> **ՍՊԸ** –ին,
3, 7, 11, 12, 16 չափաբաժինների համար <<**Մեծ Ծիածան**>> **ՍՊԸ** –ին,
9, 10 չափաբաժինների համար <<**Էքսպրես Շին**>> **ՍՊԸ** –ին,
14, 15 չափաբաժինների համար « **Տիգման Գրուպ** >> **ՍՊԸ** –ին,
17, 18 չափաբաժինների համար <<**ՄԱԿՐՈ ՖՈՒԴ**>> **ՍՊԸ** –ին:

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1, 13 չափաբաժինների համար <<**ՌԵԱՔԻՄ**>> **ՍՊԸ** –ին,
3, 10, 12, 16 չափաբաժինների համար <<**ՄԱԿՐՈ ՖՈՒԴ**>> **ՍՊԸ** –ին,
4 չափաբաժնի համար <<**Էկոմիքս**>> **ՍՊԸ** –ին,
5, 6, 14, 15, 17, 19 չափաբաժինների համար <<**Մեծ Ծիածան**>> **ՍՊԸ** –ին
7, 11, 18 չափաբաժինների համար <<**ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ**>> **ՍՊԸ** –ին:

2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգի 8-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:
**3.** Հաստատել ընթացակարգի **8-րդ** չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը(կցվում է):
4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

**Հանձնաժողովի քարտուղարին՝**

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,

2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ ________________ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ ________________ Վ. Պետրոսյան

________________ Վ.Մկրտչյան

________________ Մ.Անտոնյան

________________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Մ.Մուրադյան